ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 6

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԻՑ ԿԱՎԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով <Վանանդ Ագրո> ՓԲԸ-ի գրությունը և ելնելով այն հանգամանքից, որ Արաքս գետը մայիս ամսվա ընթացքում աննախադեպ վարարել էր, վարարումը տևել է մոտ մեկ ամիս, որի հետևանքով ջրածածկվել էր ճանապարհի մի հատվածը, որով տեղափոխում էր պայմանագրով նախատեսված կավը, Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշեց՝

1.Թույլատրել <Վանանդ Ագրո> ՓԲԸ-ին 2019 թվականի ապրիլի 29-ին կնքված պայմանագրի ժամկետը երկարացնել մեկ ամսով՝ մինչև 01.08.2019 թվականը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶԱՎԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 8

<ԱՆՀԱՅՏ> ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿՊԿ նախագահի 01.06.2010 թվականի թիվ 186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները և համայնքի ղեկավարի առաջարկությունը, Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշեց՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի տարածքում գտնվող 220 կադաստրային ծածկագրով 65.8773 հա մակերեսով Հուշակերտի 2-րդ հատվածի անհայտ քաղաքացու գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը ճանաչել համայնքային սեփականություն:

2.Սույն որոշումը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանմանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶԱՎԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ